

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ
ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ի լրումն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 1997 թվականի հունվարի 7-ի ՆՀ-117 հրամանագրով նախատեսված միջոցառումների և սահմանափակումների և հիմք ընդունելով «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 9-րդ, 11-րդ կետերը և 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ **ո թ ո շ ու մ եմ**.

1. Սահմանափակել Արցախի Հանրապետության տարածքում ազատ տեղաշարժվելու իրավունքը, ինչպես նաև սահմանել նշված տարածքից Արցախի Հանրապետության քաղաքացիների դուրս գալու հատուկ ռեժիմ:

2. Սույն հրամանագրով նախատեսված միջոցառումներն իրականացնելու և իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումների կիրառումն ապահովելու, ուժերի և միջոցների միասնական ղեկավարումն իրականացնելու նպատակով ստեղծել պարետատուն (այսուհետ՝ Պարետատուն): Պարետատան ղեկավարման համար պարետ նշանակել Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրեն Կարեն Սարգսյանին (այսուհետ՝ Պարետ):

3. Լիազորել Պարետին սահմանելու Պարետատան անհատական կազմը, ինչպես նաև միջոցառումների իրականացմանը և սահմանափակումների կիրառմանը ներգրավելու արտակարգ իրավիճակների, ոստիկանության, ազգային անվտանգության պետական լիազոր մարմինների, այլ հատուկ ծառայությունների ներկայացուցիչներին և քաղաքացիական անձանց:

4. Լիազորել Պարետին, ըստ անհրաժեշտության, սահմանելու Արցախի Հանրապետության որոշակի տարածքներ անձանց, տրանսպորտային միջոցների մուտքի (ելքի), այդ տարածքներում գտնվելու և տեղաշարժվելու հատուկ կարգ և պայմաններ:

5. Լիազորել Պարետատանը ռազմական դրության իրավական ռեժիմը խախտած կամ զորահավաքային զորակոչից խուսափող անձանց հայտնաբերելու և իրավասու մարմիններին հանձնելու նպատակով իրականացնել անձանց ինքնությունը հաստատող փաստաթղթերի ստուգում, բնակարանի և տրանսպորտային միջոցների զննություն:

6. Արցախի Հանրապետության տարածքից Արցախի Հանրապետության քաղաքացիների ելքը թույլատրել.

- կանանց,
- երեխաներին,
- զորակոչային տարիքը (18 տարին) չլրացած տղաներին և 58 տարին լրացած տղամարդկանց,
- առողջական լուրջ խնդիրներ ունեցող և բժշկական անհետաձգելի միջամտության կարիք ունեցող անձանց (եթե այդ միջամտությունը հնարավոր չէ

հրականացնել Արցախի Հանրապետության բժշկական հաստատություններում՝ Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից տրված ուղեգրի հիման վրա,

- Պարերի կողմից տրված անցաթղթի հիման վրա:

7. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից՝ անմիջապես:

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020 թ. հոկտեմբերի 14

Ստեփանակերտ

ՆՀ-465-Ն